Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

N 295
С 1926 N 527

Ս.Խ.Հ.Մ. Հ.Ս.Խ.Հ.

Պրոլետարներ, բոլոր յերկրների միացե՛ք.

Ա. ԼԻԳՆԱՈՒ

ՅԵՐԹ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏ

Թարգ. Դր. Տեր-Աստվածատրյան

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

№ 17

Կ. Կ. Բանակի Ռազմա-Հեղափոխական Խորհրդին կից
Հայկական Խմբագր.-Հրատարակչական Կոլեգիա

ԵԵՐԵՎԱՆ
1925 թ.

356
L-50

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	ԳԻՆԸ
1. **Ենվալդ.**—Հրացանա-հրաձգային գործ. փոխ. Գ. Կուրանյան	35 կ.
2. **Լ. Տոցկի.**—Կարմիր հուշատետր. թարգ. Գ. Տ-Ա.	20 կ.
3. **Գորլովսկի.** Բանվոր դասակարգի և Ռ. Կ. Կ. գրոշի տակ. թարգ. Լ. Դանիելյան	40 կ.
4. **Կոզլովսկի.**—Բողարկում I մաս. թարգ. Հ. Ալեքյան	20 կ.
5. **Կոզլովսկի.**—Բողարկում II և III մաս. թարգ. Հ. Ալեքյան	50 կ.
6. **Մ. ՌաՔեա.**—Կարմիր բանակ. թարգ. Մ. Տ.-Հովհաննիսյան	15 կ.
7. Հուշատետր հրացանաձիգ կարմիր բանակային 1891 թվականի տիպարի 3 գծանի հրացանը խնամելու համար, թարգ. Մ. Տ.-Հովհաննիսյան	20 կ.
8. Հետևակի մարտական ծառայություն. թարգ. Հ. Մկրտչյան	2 ռ. —
9. **Դ. Կիճ.**—Խորհրդային իշխանությունն ու նրա կառուցվածքը. փոխ. Լ. Վարդունի	40 կ.
10. **Ն. Մորոզով.**—Հետևազորի մարտավարություն (տակտիկա). թարգ. Գր. Տեր.-Աստվածատրյան	3 ռ. 75 կ.
11. **Ս. Միխեյեվ յեվ Վ. Սվեճցիցկի.**—Ռազմական տեղագրության դասագիրք, փոխադր. Գ. Աթայան	2 ռ. 75 կ.

N 293 356 L-50 C/1927 NOV MAR 2010

Ֆ.Խ.Հ.Մ. Հ.Ս.Խ.Հ.

Պրոլետարներ, բոլոր յերկրների միացե՛ք.

C/a 1299 U

ԼԻԳՆԱՌ

ՅԵՐԹ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏ

Թարգ. Գր. Տեր-Աստվածատրյան

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

№ 17

Կ. Կ. Բանակի Ռազմա-Հեղափոխական Խորհրդին կից Հայկական Խմբագր.-Հրատարակչական Կոլեգիա

ՅԵՐԵՎԱՆ
1925 թ.

10 2 MAY 2013

59628-66

Գրատեսվար 11 ր. Պատվեր № 4843
Յերևան, Պոլիգրաֆարհատի 2-րդ տպարան.

Ց Ա Ն Կ

Եջ

Յերթական շարժումներ 5

Գիշերային շարժումների առանձնահատկությունները 24

Տեղեկություններ զորքերի գումակների ու յերթասյուների խորության համարների համար 26

Հանգիստ 28

ՅԵՐԹԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Յերթական շարժումները քննվում են, որպես զորքերի մարտական գործողություններին նախորդող գործողություններ, որոնցով և միայն արդարացվում են զորամասերի գանազան փոխադրությունները։

Բնախոսների հետազոտությունների համաձայն, ամրակազմ փորձված բանվորի աշխատանքը նորմալ 8-ժամյա բանվորական որվա ընթացքում վորոշվում է 60,000 փթավոնաչափով։ Հետևակ զինվորի բեռը միջին հաշվով ընդունելով 60 ֆունտ և համապատասխան հաշվարք կազմելով, կստանանք, որ հետևակ զինվորը վերոհիշյալ աշխատանքը կկատարի 1 վերստանոց որվա գնացքի ժամանակ։

10 վերստից ավելի որվա գնացքն արդեն անցնում է առողջ մարդու մի որվա նորմալ աշխատանքի սահմանները և հոգնածություն և առաջ բերում մարդու մեջ, և այն էլ այնքան ավելի մեծ չափով, որքան ավելի յերկար է լինում յուրաքանչյուր որվա գնացքը և որքան

ավելի յերկարատև է այն ժամանակը, յերբ զորքերն անդադար յերթեր են կատարում։

Ռազմական (ռազմական գործողություններ) նկատառումներն սովորում են անհամեմատ ավելի մեծ գնացքներ կատարել, քան թե վերոհիշյալ 10 վերստանոց գնացքն է, սիստեմատիկ ձևով ուժասպառ անելով զորքերին։

Այս նկատառումը հատուկ զգուշություն և ուշադրություն է թելադրում յերթական շարժումներ կազմակերպելու ժամանակ։

Նայած թե հակառակորդն ինչ դրության մեջ է շարժվող զորքերի վերաբերմամբ, յերթը կարող է լինել հարձակողական, նահանջողական և թևային։

Յերթական շարժում կազմակերպելիս, պետը վճռում է հետևյալ հարցերը.

1. Շարժման նպատակը. վորոշվում է այն խնդրով, վոր ավագ պետի կողմից կարգադրության (հրամանի, պատվերի) մեջ է դրվում։

2. Շարժման՝ վերից մատնանշած նպատակը պիտի վորոշի և այն տեղը, ուր ավյալ մասը պիտի ժամանի։ Հաճախ ավագ պետի համապատասխան կարգադրության մեջ մատնանշվում է նաև այն տեղը, ուր մասը վերջնականապես պիտի ժամանի։

3. Վորոշելով ժամանելու վերջնական վայրը, վորոշվում է շարժման ուղղությունը։

Շարժման ուղղությունը տրվում է կամ միանգամյան վորոշակի ճանապարհի յերկայնությամբ կամ վայրի շերտի ուղղությամբ։

Ճանապարհը ցույց է տրվում մի շարք տեղական առարկաների (բնակավայրերի) միջոցով, թվելով նրանցից միայն այնպիսիները, վորոնք խիստ անհրաժեշտ են յերթի ճանապարհը միանգամայն ճիշտ վորոշելու համար։

Այն դեպքում, յերբ շարժման համար շերտ է տրված, ճանապարհների ընտրությունը կախված է զորական այն միավորության պետից, վոր կատարում է շարժումը։

Շարժման ուղղությունները կարող են բավարարել հետևյալ ամենապլխավոր պայմաններին.

ա) Նրանք պիտի ամենակարճը լինեն, վոչ թե տարածության, այլ շարժման նվազագույն դժվարության տեսակետից. («ամենակարճ տարածությունները միշտ ել գտնվում են խճուղիների վրա» Նապոլեոն)։

բ) Նրանք պիտի ամենահարմարը լինեն— վորքան կարելի յե քիչ հոգնեցուցիչ պիտի լինեն զորքերի համար՝ շարժման և հանգստի տեսակետից։

գ) Ամենամեծ չափով ծածկված պիտի լինեն ոդային դիտողությունից։

Յուրաքանչյուր ավյալ դեպքում, նայած պարագային, պետը վճռում է, թե բերված պա-

հանջներից վորին պետք է նախապատվություն տալ, եթե միաժամանակ բոլոր պահանջներն էլ կատարել անկարելի է։

Յերբ զորքերը միաժամանակ մի քանի ճանապարհներով են շարժվում, պիտի միջոցներ ձեռք առնել.

ա) վորպեսզի ճանապարհները իրար չխաչկապվեն,

բ) վորպեսզի նրանց մեջ յեղած տարածությունները ապահովեն փոխադարձ ոգնությունը։

4. *Զորքերի խմբավորումը։* Կատարվում է այն դեպքում, յերբ տրամադրության տակ մի քանի ճանապարհ կա։ Խմբավորումն ամբողջապես կախված է շարժման նպատակից։

Յեթե մարտ է նախատեսվում, այդ դեպքում զորքերն՝ ըստ սյունների խմբավորելը պիտի համապատասխանի մարտակարգի ապագա խմբավորման,—նախատեսելով մարտամասը, ոժանդակը, թևերն ապահովող մասերը, դլխավոր հարվածի ուղղությունը։ Այդ խմբավորումն ավելի մեծ կամ քիչ չափով վորոշ կլինի նայած թե վորչափ պարզ է պարագան։

Զորքերի բաշխումը սյուների։ Յեթե զորական միավորությունը վորոշ խմբավորման հետևանքով շարժումը կատարում է մի քանի սյուներով, այդ դեպքում բաշխումը կատարվում է յուրաքանչյուր սյունի մեջ՝ անկախ մյուսներից։

Սյունի մեջ զորքերի բաշխման դլխավոր նպատակն է պահպանել մարտական առավելագույն պատրաստականություն և շարժման հարմարություն։

Յուրաքանչյուր սյուն բաղկացած է դլխավոր ուժերից և պաշտպանող մասերից, վորոնց ուժը, կազմը, ծառայության բնույթը մասնանշված են ապահովության միջոցների մասում։

Յերբ հակառակորդի հետ ընդհարում է սպասվում, այդ դեպքում սյունի առջևից գնում են այն զորքերը, վորոնք առաջին հերթին կարող են մասնակցել մարտին. դրա հետ միասին հաշվի յե առնվում տեղանքի բնույթն ու որվա ժամանակը։

Շարժումն անտառոտ վայրերում կամ գիշերն անկարելի է դարձնում հրետանու, հասուցավոր գնդացիրների ու հեծելազորի զործադրությունը. զորքի այդ տեսակները գնում են սյունի տատում։

Այն տեղանքում, վորտեղ հնարավորություն կա զործադրել հեռաձիգ կրակ, և վորտեղ կարող է գործել հեծելազորը, այդպիսի տեղանքում հրետանին, հասուցավոր գնդացիրներն ու հեծելազորը զորասյունի մեջ դասավորվում են այնպես, ինչպես հետևակը։

Համենայն դեպս, հետևակը զանազան տեսակի զորքերից բաղկացած սյունի հիմքն է

կազմում. հրետանին միշտ էլ տեղ է բռնում հետևակ մասերի միջև։ Զրահապատ մասերը, ամենափոքր հնարավորության դեպքում, շարժվում են հատուկ ճանապարհներով. իսկ եթե այդ անկարելի է, նրանք շարժվում են առանձին խմբակով կամ առաջապահի (վերջապահի) և գլխավոր ուժերի միջև, կամ գլխավոր ուժերի յետևից։

Գումակները միշտ էլ, դեպի թշնամին շարժվելիս գնում են տուում, իսկ հակառակորդից դեպի մեզ շարժվելու ժամանակ այունի առջևում. նորմալ պայմաններում 1-ին կարգի գումակներն անմիջականորեն իրենց մասերի հետ են գտնվում. 2-րդ կարգի գումակները շարժվում են առանձին այուններով զորքերից կես գնացք հեռու։

Վորպես բացառություն զորքերի հետ կարելի է թողնել միայն 1-ին կարգի գումակների մարտական շարանը (հրապաշարը, գազային, ճարտարագիտական, սանիտարական գույքը). մնացածները ջոկվում են իբրև մի առանձին այուն կամ միացվում են 2-րդ կարգի գումակին։

Գումակների այունում սայլերը բաշխվում են իրենց նշանակության համեմատ. զորքերին մոտիկ են գտնվում այնպիսի գույք ունեցողները, վորոնց կարիքը զորքերը զգում են առաջին հերթին։

6. Սեկնելու ժամանակը կախված է ավյալ-

շրջանը հասնելու համար նշանակված ժամկետից ընթացուղու յերկարությունից և շարժման արագությունից։

Ժամանելու ժամկետը նշանակում է ավագ պետը գործողությունների ընդհանուր ծրագրի համեմատ. զորքերը պիտի ժամանեն այն հաշվով, վորպեսզի նրանց կարելի լինի ոգտագործել գործողության ընթացքի համեմատ հարկավոր րոպեյին, և վորպեսզի նրանք կարողանան կատարել ամբողջ նախապատրաստական աշխատանքը, յեթե այդպիսի աշխատանք անհրաժեշտ է։

Յեթե տեղ հասնելու ժամանակը վերից ցույց չի տրված, այդ դեպքում ժամանակը վորոշում է շարժումը կատարող զորական միավորության պետը, իր հայեցողությամբ, առաջնորդվելով շարժման նպատակով։

Յեթե այունն անցնում է մի շրջանից դեպի մի ուրիշ շրջան, վորտեղ գիշերոթ պիտի ունենա, այդ դեպքում ժամանելու ժամանակը վորոշվում է այնպիսի հաշվով, վոր գիշերոթում տեղավորվելն ու պահպանություն դնելը վերջանա դեռ լուսով։

Ընթացուղու յերկարությունը (այն տարածությունը, վոր գտնվում է զորամասը յեղած կետից մինչև այն կետը, ուր պիտի հասնի նա) չափում են կարկինով քարտեզի վրա. անհրաժեշտ է, ըստ հնարավորության ճիշտ չափել (ճա-

նապարհների վոլորները), և մի վորոշ գործակից (коэфициент) պիտի վերցնել անհարթությունների (վերելքների ու վարելքների) համար. չափանիշը կախված պիտի լինի տեղանքի խորդուբորդության աստիճանից։

Որվա միջին գնացքը հետևակի համար 25 կիլոմետր է, հեծելազորի ու հրետանու համար 30—35 կիլոմետր։

Շարժման արագությունը վորոշվում է փորձնական միջին չափերով. հետևակի համար 4 կիլոմետր մի ժամում, հրետանու և հեծյալ մասերի համար՝ քայլով 5—6 կիլոմետր, փոփոխական քելքով 8 կիլոմետր մի ժամում։ Հիշյալ չափերի մեջ մտնում է նաև փոքր դադարը։

Գրատներով (լեռնային) հրետանին շարժվում է միայն քայլով։

Գումակները շարժվում են մի ժամում 3 կիլոմետր արագությամբ։

Զանազան տեսակի զորքերից բաղկացած այուների շարժման համար արագությունը վորոշելու ժամանակ հիմք է ընդունվում այդ չափերից փոքրագույնը։

Շարժման արագությունը մի փոքր ավելանում է խճուղիներից ոգտվելու և ցուրտ յեղանակին շարժվելու ժամանակ. արագությունը նվազում է, յերբ ոգտվում են վատ ճանապարհներով (ավազ, ցեխ), խոր ձնի վրայով, շոգ յեղանակին, գիշերով, խորդուբորդ տեղանքով, քիչ ծանոթ ճանապարհներով շարժվելիս։

Շարժման արագության վրա զգալի չափով ազդեցություն ունի զորքերի շարժման նպատակի առթիվ ունեցած տրամադրությունը դեպի հակառակորդը կատարվելիք շարժումը նվազեցնում է արագությունը, հակառակորդից դեպի մեզ կատարվելիք շարժումն ավելացնում է արագությունը։

Մեկնելու ժամանակը։ Ընթացուղու յերկայնությունը բաժանելով շարժման արագության վրա, կստանանք ժամերի այն թիվը, վոր անհրաժեշտ է պահանջվող տարածությունն անցնելու համար. ժամերի ստացած թվին ավելացնում են մեծ դադարքի համար նշանակված ժամանակը (յեթե դադարք տրվելու յե), այդպիսով ստացվում է շարժման համար նշանակված ժամերի ընդհանուր թիվը։

Տեղ հասնելու համար նշանակած ժամից հանելով ժամերի ընդհանուր թիվը, կստանանք մեկնելու ժամը։

Գիշերոթի վայրից մեկնելուց առաջ զորքերին պետք է կերակրել։ Հատուկ ուշադրություն պիտի դարձնել ձիերին ժամանակին կշտացնելու վրա։

Առանց հատուկ կարևորության՝ մեկնելու ժամը չպիտի նշանակել լուսաբացից առաջ։

Սառատիկ շոգերին ավելի լավ է շարժում կատարել առավոտյան և երեկոյան ժամերին, ուստի մեկնելու ժամը նշանակվում է լուսաբացից առաջ։

7. *Ապահովության միջոցներ*. Երթևեկան շարժումն ապահովելու համար անպայման ապահովության միջոցներ են ձեռք առնվում՝ ինչպես գյուղում էլ որ կատարվելիս լինի շարժումը։

Առաջին հերթին հետախուզություն է ուղարկվում, և շարժումն պահպանելու համար վերակարգ է արվում, համաձայն այն ցուցումների, որ բերված են «ապահովության միջոցներ»-ի բաժնում։

Յերթևեկան շարժումը պաշտպանող մասերի առաջավոր խմբակներին արվում են գազային հրահանգիչներ, որոնք պիտի ժամանակին յերևման հանեն գազերով թունավորված տարածությունները։

Սյունում հաստատվում են ոդային դիտողության պոստեր։

Բոլորը պետք է հակագազային դիմակները միանգամայն սարք ու պատրաստ պահեն մոտները։

8. *Անարգել շարժման միջոցներ*. Յեթե յերթևեկան շարժումը կատարվում է հակառակորդից հեռու, այդ դեպքում սյուների ընթանալու համար նշանակված ճանապարհները վաղորոք հետախուզվում են, պարզելու համար ճանապարհների վորակը, շարժման համար յեղած արգելքներն ու այդ արգելքները վերացնելու համար անհրաժեշտ աշխատանքները։

Վաղորոք արգելքները վերացվում են կամ զորական մասնագետների ղեկավարությամբ տեղական բնակիչներից վերցրած բանվորներով, կամ ռահվիրաների հատուկ վերակարգերի ոգնությամբ։

Անհրաժեշտության դեպքում հաստատվում են ուղեցույցներ կամ «փարոսներ»։

Այն դեպքերում, յերբ հակառակորդի մոտիկության պատճառով, հիշյալ միջոցներն անկարելի յեն դառնում, ճանապարհի հետախուզությունը կատարում են զորական հետախուզության մարմինները, որոնք պարտավոր են նախազգուշացնել սյունին շարժման ճանապարհին հանդիպած արգելքների մասին։

Շարժումը պաշտպանող առաջավոր մասերի ստորաբաժանումներին (առաջավոր ուղեկալ, առաջավոր ջոկատ, առաջապահ) արվում են ռահվիրաներ և պայթեցնողներ, որոնք վերացնում են արգելքները մինչև գլխավոր ուժերի սյունի մոտենալը։

Փիչ ծանոթ տեղանքում շարժվելիս, ինչպես և քարտեզներ չունենալու դեպքում տեղական բնակիչներից ուղեցույցներ են վերցվում։

9. *Շարժումը կարգավորելու վերաբերյալ*

միջոցներ։ Այս միջոցների եյությունն այն է, որպեսզի յերթական շարժումը, որ ընդհանրապես ֆիզիքական ուժերի մեծ վատնում է պահանջում, ընթանա առավելագույն չափով կազմակերպված ձևով. այդ զգալի չափով մեղմացնում է յերթի ծանրությունը։

Ամենից առաջ զորքերը նախազգուշացվում են շարժման մասին այնքան վաղորոք, որպեսզի պատրաստվեն շարժմանն առանց ավելորդ շտապողականության ու իրարանցման և կարողանան հաժապատասխան միջոցներ ձեռք առնել ճանապարհների հետախուզության և շարժման արգելքները վերացնելու համար։

Սյունը կազմող առանձին ստորաբաժանումները սյունի մեջ են մտնում այնպիսի հաշվով, որ սխալված չլինեն անսպասելի սպասելու։

Չպիտի թույլ տալ ավելորդ շարժումներ կատարել թե ամբողջ սյունին և թե այդ սյունը կազմող ստորաբաժանումներին։ Ուստի հավաքատեղ բոլորովին չեն նշանակում, այլ սյունը կազմվում է շարժման սկզբից՝ այդ սյունը կազմող բոլոր ստորաբաժանումները սյունի մեջ առնելով։

Անհրաժեշտ է միայն ցույց տալ ամբողջ սյունի շարժման ճանապարհին գտնվող յելակետը և այն ժամանակը, յերբ սյունի յուրաքանչյուր բաղադրիչ մաս պիտի մոտենա այդ յելակետին այնպիսի հաշվով, որ մասը սյունին խառնվի առանց ավելորդ հապաղումների։

Մասերը պիտի յելակետը գտնեն առանց վարյեվե դժվարության (աչքի ընկնող տեղական առարկա)։ Ցեռնտու յե յելակետը նշանակել այնպիսի հանապարհների հանգույցում, որոնք սյունը կազմող ստորաբաժանությունների տեղավորման վայրերից տանում են դեպի այդ հանգույցը։

Հետախուզությունն ու պահպանող մասերը ուղարկվում են առաջուց այնպիսի հաշվով, որ նրանք հասնեն պահանջվող հեռավորությանն այն ժամանակ, յերբ գլխավոր ուժերը կսկսեն շարժումը։

Զորասյունի բաղադրիչ մասերի միջև պահպանվում են սահմանված հեռակայությունները։

Յեթե զորական միավորությունը յերթական շարժումը կատարում է մի քանի սյուներով, այդ դեպքում վարոշվում են այն ընդգծերը, որոնցով առանձին սյուները պիտի անցնեն վոմոշ ժամերին։

Զանազան մասերից կազմած յուրաքանչյուր սյունում հատուկ պետ է նշանակվում։

Շ-րդ կարգի գումակների շարժումը նշանակվում է այն հաշվով, որ նրանք վոչ մի դեպքում զորքերին չնեղեն (շատ չմոտենան)։

Զորքերը շարժվում են այնպիսի սյունով,

ՀՍՍՌ-Արմ ССР

վոր նրա լայնությունը ճանապարհի լայնության կեսից ավելին չլինի։

Սյունի կազմի մեջ մտնող վոչ մի ստորաբաժանում առանց սյունի պետի թույլտվության, չի կարող կանգ առնել, փոխել իր տեղը կամ գնալ մի այլ ճանապարհով (ճանապարհը կրճատելը, անկյունները կտրելը)։

Բնակավայրեր անցնելու ժամանակ պետք միջոցներ ձեռք առնել, վորպեսզի մարդիկ զանազան պատրվակներով անները չցրվեն։

Յեթե, հանգամանքների շնորհիվ, շարժման ժամանակ փոխվում է ուղղությունը, այդ դեպքում սյունի թեքվելու տեղում ձիավոր մարդկանցից փարոս է դրվում, վորը պարտավոր է ուղղել այդ ճանապարհով շարժվող բոլոր զորքերին, նրանց թվում նաև գումակներին։

10. *Ուժերը պահպանելու միջոցներ։* Բացի վերոհիշյալ միջոցներից, վորոնք անուղղակի կերպով ազդում են զորքերի ֆիզիկական ուժերի տնտեսման վրա, այդ նպատակով անմիջական միջոցներ են ձեռք առնվում։

Մեկնելուց կես ժամ անց և այնուհետև շարժման յուրաքանչյուր ժամի վերջում փոքր դադարքներ են նշանակվում 5—10 րոպե տևողությամբ։

Փոքր դադարքից վոչ մի կերպ խույս տալ չի կարելի։

Ճանապարհի մեծ մասն անցնելուց հետո, նշանակվում է մեծ դադարք 2—3 ժամով, կերակուր ընդունելու համար։

Մարդիկ չպետք նեղվեն այն ամենում, ինչ չի խանգարում յերթի կարգը (վոտք չեն պահում, յերգում են, ծխում են, հրացանները կրում են ում ինչպես հարմար է, շոգ ժամանակ բացում են ոձիքի կոճակները և այլն)։

Զրամանները պետք լիքը լինեն թարմ ջրով։

Յեթե հնարավորություն կա տոպրակները կամ պայուսակները պետք բարձել սայլերի վրա (մի վաշտին — 3 սայլ)։

11. *Կապ։* Սյունի՝ միևնույն ճանապարհով շարժվող մասերի միջև, շարժման ժամանակ կապը պահպանվում է հետևյալ ձևով.

ա) Սյունի բոլոր մասերին շարժման կարգի վերաբերյալ ուղարկած հաղորդագրությամբ (մասերի բաշխումը, մեկնելու ժամանակը, մեծ դադարքի ժամանակը)։

բ) Սյունի բոլոր մասերին սյունի պետի ու նրա շտաբի տեղի վերաբերյալ ուղարկած հաղորդագրությամբ։

գ) Ժամկետային զեկուցագրերով, յերբ սյունի մասերը վորոշ կետերի են հասնում։

Կապի միջոց կարող են ծառայել ձիավոր սուրհանդակները, հեծանվորդները, շարժանվորդ-

ները, (մոտոցիկլիտները), յեթե այդպիսիները տրված են սյունին։

Մեկնելուց առաջ զորասյունի պետը հիշյալ միջոցների վերակարգ է կատարում սյունի առանձին ստորաբաժանումների միջև։

Զուգահեռական ճանապարհներով շարժվող սյունների միջև կապը պահպանվում է հետևյալ ձևով.

ա) Բոլոր սյունների պետերը փոխադարձաբար հաղորդում են իրար շարժման ուղղության, սյունի կողմի, մեկնելու ժամանակի, շարժման կարգի մասին։

բ) Փոխադարձաբար հաղորդում են իրար սյունների պետերի ու նրանց շտաբների տեղի մասին։

գ) Սահմանում են վորոշ ընագծեր անցնելու ժամանակը։

դ) Սյունների պետերը փոխադարձաբար հաղորդում են իրար վորոշ կետեր հասնելու մասին։

Իրրև կապի միջոց են ծառայում.

Զիավոր սուրհանդակների, հեծանվորդների ու շարժանվորդների վերակարգով սժված պատվիրակների փոխանակություններ։

Զորասյունների և ավագ պետի միջև կապը պահպանվում է հետևյալ միջոցներով.

ա) Սյունների պետերի՝ ավագ պետի ու նրա շտաբի տեղի վերաբերյալ ուղարկած հաղորդագրությամբ։

բ) Սյունների պետերի զեկուցագրերով, սյունների միջև կապ պահպանելու ա, բ, գ և դ կետերի համաձայն։

Կապը հաստատվում է հետևյալ ձևով.

ա) Նշանակվում են հավաքատեղեր սյունների շարժման ճանապարհից զեկուցագրեր հավաքելու համար. այդ հավաքատեղերը կարող են ընդհանուր լինել բոլոր սյունների համար և կենտրոնական ճանապարհի վրա։

Զեկուցագրերի հավաքատեղերը հարմարեցվում են հեռագրական և հեռախոսական կայաններին։

Յեթե տեխնիկական կապ հաստատել չի կարելի, այդ դեպքում թռուցիկ պոստ է կազմակերպվում։

բ) Պոստեր են կազմակերպում ստվարանակներից տեղեկություններ ընդունելու համար։

Զորամասերին շարժական ռադիոկայաններ հայթայթելու դեպքում, դրանք զգալի չափով հեշտացնում են կապը զորասյունների և ավագ պետի միջև։

12. Շարժման գաղտնապահությունը ձեռք է բերվում.

ա) Բնական ծածկարաններ (անտառտ տարա-

ծությունները) ունեցող ուղղություններ ընտրելով։

բ) Զորական միավորությունը մանր այուների մասնատելով։

գ) Այուներն այնպիսի նեղ շարքերով շարժելով, որոնք թույլ են տալիս դրավել ճանապարհների կողմերը։

դ) Գաղտնի պահելով շարժման կազմակերպության վերաբերյալ բոլոր նախնական կարգադրությունները։

ե) Հակառակորդին մոլորեցնելու նպատակով միջոցներ ձեռք առնելով՝ շարժման կեղծ ուղղությունների մասին լուրեր տարածելը, բնակիչներից այն ճանապարհների մասին հարցուփորձ անելը, որոնցով մտադրություն չկա ոգտվել, միաժամանակ մի քանի ճանապարհների հետախուզություն կատարելը և այլն։

զ) Տեխնիկական քողարկում գործադրելով։

13. *Շարժումն արագացնելը։* Շարժման սովորական արագությունն ավելացնելը չի թույլատրվում։

Փոքր դադարքները դուրս ձգելը չի թույլատրվում. մեծ դադարք կարելի է չգործադրել։

Մանր այուներով շարժումը նպաստում է շարժման ընդհանուր արագությունն ավելացնելուն։

Ամենից գործոն միջոցն է զորքերի փոխադրությունը սայլերով, ապրանքատար ավտոմոբիլներով, եթե կան փոխադրական միջոցներ։

Փոխադրությունը կատարվում է հետևյալ հաշվով. հետևակի մի գումարտակի համար հարկավոր է 150 սայլ կամ 10 ապրանքատար ավտոմոբիլ։

Յերթական շարժումը կազմակերպելու ժամանակ, պետք հրաման է արձակում, որտեղ մատնանշում է.

1. Տեղեկություններ հակառակորդի մասին։

2. Տեղեկություններ իր հարևան զորքերի մասին։

3. Շարժման նպատակը։

4. Զորքերն ըստ զորասյուների կամ այուների մեջ բաշխելը, յուրաքանչյուր այունի համար պետ նշանակելով, մեկնելու կամ նշանակված վայրը ժամանելու, յելակետն անցնելու ժամանակը, շարժման ուղիները, ընագծերն անցնելու և մեծ դադարքից մեկնելու ժամանակը։

5. Հետախուզության միջոցները։

6. Ապահովության (պահպանության) միջոցները։

7. Կապի միջոցները։

8. Սահմանափակման գծեր, եթե շարժման շերտ է տրված։

9. Կարգադրություններ 2-րդ կարգի գումակների մասին։

10. Տեղակալներ։

Այս հրամանի հիմունքներով ստորադաս պետերն իրենց կարգադրություններն են անում իրենց մասերի և խնդիրների սահմաններում։

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ողջունության ժամանակակից դրությամբ գիշերային շարժումները չեն կարող ապահովված համարվել ոդային հետախուզությունից, որը ներկայումս գիշերով նույնպես դիտողություն կատարելու միջոցներ ունի։

Գիշերային յերթեր կազմակերպելու ժամանակ պիտի նկատի ունենալ հետևյալը.

ա) Շարժումն ավելի հոգնեցուցիչ է.

բ) Զորքերի ջղայնությունը զգալի կերպով բարձրանում է. կարող է անկարգություն առաջանալ ամենաչնչին պատահականությունից.

գ) Կապը դժվարանում է.

դ) Տեղանքը դժվարությամբ է ճանաչվում. հեշտությամբ կարելի յե շեղվել ճանապարհից.

ե) Կրակի մարտը դժվարանում է, մարտ մղել հնարավոր է ամենամոտ տարածությունների վրա։

զ) Հեծելազորը չի կարող գործել.

է) Մարդկանց վրա հսկելը դժվարանում է։

Արհրաժեշտ է առանձնապես խնամքով կազմակերպել գիշերային յերթը և նկատի ունենալ հետևյալը.

1. Առանձին ուշադրությամբ ուսումնասիրել շարժման ուղիները և միջոցներ ձեռք առնել արգելքները վերացնելու համար։

2. Հուսալի ուղեցույցներ (վարիչներ) ունենալ։

3. Պահպանող մասերն ուղարկել միայն ճանապարհներով, պահել նրանց կարճեցրած հեռավորությունների վրա. հեծելազորը նշանակել միայն զեկուցագրերի համար։

Զորասյունի անմիջական պահպանությունն ուժեղացնել։

4. Հրետանին, հատուցավոր գնդացիրները, զրահապատ մեքենաները ու հեծելազորը պիտի պահել հարձակման ժամանակ սյունի տու

9. Վոչ մի դեպքում չպիտի թույլ տալ, որ սյունը ձգվի. հեռակայությունները պիտի կըբճատել։

10. 1-ին կարգի գումակները պիտի նշանակել հատուկ սյունի մեջ. այդ սյունը հարձակման ժամանակ պահելով ատում, նահանջի ժամանակ առջևում։

11. Լիակատար կարգ և լռություն պիտի պահպանել։

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁՈՐՔԵՐԻ ԳՈՒՄԱԿՆԵՐԻ ՈՒ ՅԵՐԹԱՍՅՈՒՆԵՐԻ ԽՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԲԱՆԲԻ ՀԱՄԱՐ

ՁՈՐԱՄԱՍԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՄԱԿՆԵՐԻ ՍՅՈՒՆԵՐ	Խորությունը մետրով	Խորությ. կիլոմետր
I. Հեսեվազոր.		
Վաշտը զուգաշար սյունով . . .	150	—
» յեռաշար » . . .	100	—
Գումարտակը (3 վաշտ, գնդացրային վաշտ) զուգաշար սյունով . . .	557	—
յեռաշար սյունով . . .	400	—
Գունդը (3 գումարտակ և բոլոր խմբերն 1-ին կարգի գումակով) . . .	2145	2
II. Հեծելազոր.		
Հեծելավաշտը զուգաշար սյունով . .	200	—
» յեռաշար » . .	130	—
Գունդը զուգաշար սյունով . . .	850	—
» յեռաշար » . . .	580	—

ՁՈՐԱՄԱՍԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՄԱԿՆԵՐԻ ՍՅՈՒՆԵՐ	Խորությունը մետրով	Խորությ. կիլոմետր
III. Հրետանի.		
Մարակոցները հրանոթասյունով՝ բոլոր ոմբաբկերներով և 1-ին կարգի գումակով		
Թեթև մարակոցը	430	—
Լեռնային մարակոցը	436	—
Հոբիցային թեթև մարակոցը . . .	515	—
Ծանր հոբիցային » . . .	515	—
Ծանր թնդանոթային » . . .	643	—
Պարկեր (կրաճիճեր).		
Թեթև	437	—
Հոբիցային	710	—
Բաժնյակներ (Վաշտություն, մարտկոցներ, պարկեր)		
Թեթև	2000	2
Հոբիցային թեթև	1221	1¼
Ծանր հրետանական . . .	1500	1½
IV. Ճարտարագիտական զորքեր.		
Ռահվիրական առանձին վաշտ . . .	124	—
Ճարտարագիտական գումարտակ . .	557	—
Հրաձիգ դիվիզիայի կապի գումարտակ . .	675	—
Քիմիական վաշտը հատուկ գումակով . .	450	—
V. Ցերկրորդ կարգի գումակներ.		
Հետևակ գնդի	570	—
Հեծյալ »	100	—
Թեթև լեռնային, հոբիցային թեթև և ծանր մարակոցի	20	—
Թեթև հոբիցային պարկի (կրանքի) . .	20	—
Ծանր պարկի	40	—
Թեթև հոբիցային բաժնյակի . . .	320	—
Ծանր հրետանային բաժնյակի . . .	543	—

ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՄԱԿՆԵՐԻ ՍՅՈՒՆԿ	Զորամասերի թվաքանակը	Զորամասերի անձնակազմ
Ճարտարագիտական գումարտակի . .	557	—
Կապի գումարտակի	30	—
Ռահվիրական վաշտի	15	—
VI. Զրահապաս մասեր.		
Մեքենաների (ավտոմոբիլի կամ տանկի) միջև հեռակայությունը	12—15	—
Ավտոմոբիլի յերկայնությունը . . .	4	—
Տանկի » . . .	4—8	—
Զրահապաս ոդակ (2 մարտական, 1 թեթև, 1 բեռնակիր մեքենա) . . .	—	—
Զրահապաս բաժնյակ (5 ոդակ) . .	—	—
Տանկերի բաժնյակ (6 թեթև և 4 ծանր) .	—	—

ՀԱՆԳԻՍՏ

Հանգիստը կվերականգնի զորքերի ուժերը միայն այն ժամանակ, յերբ նա հարմարություն կտա տեղավորվելու համար (քնի համար լավ պայմաններ) և ապահովություն կտա (նյարդային լարվածություն չի լինի)։

Ժամանակակից պայմաններում հանգստի տեղավորվելու ժամանակ միշտ պիտի նկատի ունենալ թշնամու՝ սավառնակների յերևան գալու հնարավորությունը. նրանք կարող են յերևան գալ հետախուզության և ռումբեր նետելու, վորոնց թվում նաև գազային ռումբեր նետելու նպատակով։

Դրա հետ միաժամանակ պիտի աչքի առաջ ունենալ, վոր տեղական բնակիչները կարող են թշնամական գործողություններ կատարել։

Քողարկումը, ոդը դիտելը, հակագազային կռվի միջոցները, բնակիչների տրամադրությունը, հսկելը և անմիջական պահպանության միջոցները ուրջ նշանակություն ունեն։

Զորքերը հանգստի յեն տեղավորվում բացոթյագում, բնակարաններում և բնակարան-բացոթեգային կարգով։

Բացոթյագը բաց ոդում տեղավորությունն է — թույլատրվում է միայն այն ժամանակ, յերբ անտառներ կան (ձմեռը փշատերև անտառներ)։

Բնակարանային տեղավորությունն այն է, յերբ մարդիկ ու ձիերը ծածկի տակ են տեղավորվում.— այդ գիշերոթի նորմալ ձևն է։

Բնակարան-բացոթյագն այն է, յերբ մարդկանց ու ձիերի մի մասը տեղավորվում են ծածկի տակ, իսկ մնացածները գտնվում է նույն բնակավայրում կամ մոտակա շրջակայքում՝ բաց ոդում. ծածկից ոգտվելու համար հերթ է սահմանվում։

Հանգստի համար ամեն տեսակի տեղավորության ժամանակ հետևյալ միջոցներն են ձեռք առնվում.

1. Արտաքին վտանգի դեմ ապահովելու համար։

2. Ներքին կարգը պահպանելու համար։

3. Զորքերի մարտական պատրաստականությունն ավելացնելու համար։

4. Ուժերը ամրացնելու համար։

Արտաքին վտանգի դեմ ապահովության համար անհրաժեշտ է.

ա) Անշարժ պահպանություն դնել և հետախուզություն ուղարկել։

բ) Միջոցներ ձեռք առնել անմիջական պահպանության համար, վորը, հակառակորդի մոտիկության, նրա ձեռներեցության, տեղացիների տրամադրությանը նայած, բաղկացած է լինում կամ ուղեկալներից, վորոնցով շրջապատվում է դասավորման տեղը, կամ ճանապարհների վրա դրած ուժեղացրած պոստերից, կամ դեպքերից, վորոնք դիտում են տեղանքը։

գ) Զորքերի տեղավորության վայրում որոշակի մասի վերակարգ նշանակել. այդ մասի մեծությունն է առաջապահում և վերջապահում բոլոր տեսակի զորքերի 1/6-ի չափ, գլխավոր ուժերում 1/9—1/12-ից վոչ ավելի—գլխավորապես հետևակից։

Որոշակի մասը գտնվում է ամենամեծ մարտական պատրաստականության մեջ (մարդիկ խելու չեն հանում հագուստներն ու հանդերձանքը, լծած ձիերը չեն արձակվում և նստելու ձիերի թամբերը չեն վերցվում)։

Յերբ որոշակի մասը մեկնում է անշարժ պահպանությանն ոգնելու, այդ դեպքում նոր որոշակի մաս է նշանակվում։

դ) Ոգի դիտողություն կազմակերպել (դիտող պոստեր)։

ե) Միջոցներ ձեռք առնել սավառնակներից գազային ռումբեր նետելու դեպքերի դեմ։

զ) Բնական և արհեստական քողարկման միջոցներ ձեռք առնել։

է) Հետախուզություն (քաղաքական հետախուզություն) կատարել բնակիչների տրամադրության մասին. հարկ լեղած դեպքում, պատանդներ վերցնել։

Ներքին կարգապահությունն ապահովելու համար անհրաժեշտ է.

ա) Կայազորի պետ նշանակել բնակարանային և բնակարան-բացոթեղային տեղավորության ժամանակ և որոշակի նշանակել բացոթեղային կարգով տեղավորվելու ժամանակ։

բ) Յուրաքանչյուր մասում որոշակիների, որավորակների և պահակների վերակարգ կատարել «Ներքին ծառայության կանոնագրքի» համաձայն։

գ) Միջոցներ ձեռք առնել հրդեհները կանխելու և տեղի ունեցած հրդեհները հանգցնելու համար։

դ) Միջոցներ ձեռք առնել հասարակական հիմնարկները պահպանելու համար։

ե) Ցույց տալ այն տեղերը, վորտեղից պիտի ջուր վերցնել խմելու, կերակուր պատրաստելու և այլ կարիքների համար։

Յեթե կան միայն ջրհորներ, դրանք բաշխվում են մասերի միջև. ջրհորների մոտ սահմանվում է նրանցից ոգտվելու կարգը՝ հարկ յեղած դեպքում պահակներ դնելով։

զ) Պետք է տեղ հատկացնել միս մորթելու, միջոցներ ձեռք առնել կեղտոտությունները թաղելու համար. արտաքնոցների տեղերը ցույց տալ։

է) Սահմանել խար, վառելիք և փոված ստանալու կարգը։

ը) Բնակարան-բացոթեգային կարգով տեղավորվելու ժամանակ հերթ սահմանել ծածկից ոգտվելու համար։

Մարտական պատրաստականությունն ավելացնելու համար անհրաժեշտ է.

ա) Յուրաքանչյուր բնակավայրում և բացոթյագում հավաքատեղերը նշանակել տաղնապի դեպքի համար։

բ) Ուսումնասիրել շրջակա տեղանքը, դեպի հակառակորդը և դեպի հարևան մասերը տանող ճանապարհները հետազոտելու, պաշտպանության համար հարմար կետեր և բնագծեր ընտրելու և տեղավորման մատույցները պարզելու նպատակով։

գ) Զորքերն այնպես խմբավորել, վոր ավելի պատրաստ զորքերը կարողանան պաշտպանել սակավ պատրաստներին. հրետանին միշտ պիտի տեղավորվի հետևակի մեջ. հետևակի և հեծելազորի միասին տեղավորվելու ժամանակ, հեծելազորը տեղավորվում է հետևակի յետևից։ Գումակները տեղավորվում են կամ թիկունքում առանձին, կամ հետևակի պաշտպանության տակ։

դ) Կայան և արագ կապ կազմակերպել զորական միավորության պետի և ստորադաս մասերի միջև. հարևանների և ավագ պետի հետ, առանձին բացոթյագների կամ բնակարանային շրջանների երար միջև, անշարժ պահպանության հետ։

Շտաբները կենտրոնացնել իրենց շրջաններում ճանապարհների հանգույցների վրա. շտաբների տեղերը պիտի հայտնի լինեն ստորադրյալ մասերին և հարևաններին։

Այդ տեղերը նշանակվում են դրոշակներով, գիշերները՝ լապտերներով։

Հարկ յեղած դեպքում, ազդանշան է սահմանվում տաղնապի համար և ժամանակվում է, թե զորքերն ինչ պիտի անեն այդ դեպքում։

Ուժերի տնտեսությունը։ Ընդհանուր դրությունը հանգստի տեղավորվելու ժամանակ.

1. Յերբ զորքերը հանգստի վայրն են ժամանում, չպիտի սպասեն, այլ անմիջապես պի-

ով գրավեն իրենց համար նշանակված շրջանները։

2. Արգելն հանգստի տեղավորված մասերի վոչ մի ավելորդ տեղափոխություն կամ փոփոխություն չպիտի թույլատրել։

3. Հանգստացող զորքերի արտաքին և ներքին ապահովության համար նշանակվող վերակարգը սահմանափակել խիստ անհրաժեշտ վերակարգով։

4. Զորքերը հանգստի ժամանելուն պես պիտի գտնեն այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրանց քնի և ննդի համար։

Հիշյալ գրությունները իրագործելու համար, ձեռք են առնվում հետևյալ միջոցները.

1. Գիշերոթի շրջանները վորոշում և պետք բարտեզով, հաշվի առնելով այն բոլոր պայմանները, վորոնք ապահովում են արտաքին վտանգից և ապահովում են մարտական պատրաստականությունը։ Գիշերոթի համար նախապես նշանակված շրջանը բաշխվում է մասերի միջև։

Բնակարանորդներն առաջ են ուղարկվում այնպիսի հաշվով, վոր զորքերի մոտենալու ժամին բացոթյակների տեղերը կամ բնակարանները հատկացնելու վերաբերյալ նախնական ամբողջ աշխատանքն ավարտված լինի։ Սովորաբար բնակարանորդներն ուղարկվում են մեծ դաղարքից։

Բացոթեգային տեղերը հատկացնելու համար ուղարկվում են ուղղապահներ՝ յուրաքանչյուր հետևակ ու հեծյալ վաշտերից մի-մի հոգի և յուրաքանչյուր մարտկոցից յերկու հոգի։ Բնակարաններ հատկացնելու համար՝ յուրաքանչյուր վաշտից ու մարտկոցից — 4 հոգի։ Յուրաքանչյուր առանձին մաս ավագ բնակարանորդ է նշանակում։

Ավագ բնակարանորդը տեղ հասնելով.

ա) Զննում է վայրը և տեղեկություններ հավաքում սանիտարական դրության մասին, ջրի մասին (ջրհորներ և հոսող ջրեր) խարի, վառելիքի, պարենի մասին։

բ) Բաժանում է տեղամասերի, զորամասերի թվի և կազմի համեմատ, բաշխում է ջրհորները։

գ) Ընտրում է հրետանային պարկերի (կրանքների) և զումակների տեղերը։

դ) Տներ և ընտրում հիվանդանոցների և շտաբների համար։

ե) Յեթե բնակիչները թշնամաբար են տրամադրված, միջոցներ է ձեռք առնում ջրհորները թունավորելուց և կեղտոտելուց պահպանելու համար։

զ) Յեթե բնակիչները թշնամաբար են տրամադրված, պատանդներ է վերցնում։

Մնացած բնակարանորդները կատարում են

վերոհիշյալ աշխատանքներն իրենց շրջաններում, բաշխելով տներն ու բակերը։

Սովորաբար միջին հաշվով պահանջվում է.

ՄԱՍԻ ԱՆՈՒՆԸ	Բակերի թիվը.		Ջրի դույլերի թիվը մի որում.	
	Ընդարձակ	Խիտ	Մարդկանց համար	Ձիերի համար
Վաշտ և համապատասխան կազմի ստորաբաժանումներ	25	5	40	10
Գումարտակ . .	100	21	165	55
Հետևակ գունդ .	400	100	600	300
Հեծելավաշտ . .	30	10	25	200
Մարտկոց . . .	35	10	40	275

Դանոթություն. 1. Ընդարձակ տեղավորության ժամանակ մարդիկ գտնվում են բնակելի տներում, ձիերը ծածկի տակ և աքսոններում։

2. Խիտ տեղավորության ժամանակ մարդիկ տեղավորվում են նաև վոչ բնակելի շենքերում (ամբար, ցախանոց) ձիերը շվաքարանի (չարդախի) տակ։

3. Մի բակում միջին հաշվով տեղավորվում են 10 մարդ և 5 ձի։

4. Մի մարդու համար որական անհրաժեշտ է $^1/_6$ դույլ ջուր, մի ձիու համար 6 դույլ։

2. Այունը գիշերոթի վայրն է բերվում ամենակարճ ճանապարհներով, վորի համար բնակարանորդները դիմավորում են իրենց մասերին ճանապարհների համապատասխան ճյուղավորությունների մոտ։

Մի անգամ արդեն հանգստի իջած զորքերը վոչ մի դեպքում չեն շարժվում տեղերից։

Յուրաքանչյուր պետ պարտավոր է նախապես մտածել իր մասի տեղավորության վերաբերյալ բոլոր հարցերի մասին։

3. Բնակարանորդները, նախապես հավաքած իրենց տեղեկությունների հիման վրա, իրենց մասերին դիմավորելիս, զեկուցում են, թե վորտեղ և վոր մասին են տեղ հատկացրել, վորտեղ են՝ ջուրը, փայտը, վառելիքը, խարը և այլն։

Յուրաքանչյուր պետ միջոցներ է ձեռք առնում, վոր իր մասը տեղավորվելուն պես կերակուր և յեռման ջուր ստանա։

Բացոթեզային կարգը։ Բացոթյագում տեղավորվելու ժամանակ հիմնական պահանջն ամենամեծ չափով քողարկումն է, զորքերի կենսագործունեությունը պահպանելու հետ միասին։

Մասերը հավաքական շարքեր են զորձադրում, հարմարվելով անտառի կամ պուրակի գծագրությանը։

Դրա վերաբերյալ ճիշտ ցուցումներ չեն տրվում, պետերին է թողնվում ստատ շարվածքը

ներ ընարել, այուն, յերկայնած շարք, նեղ միջանցքներով մի շարք այուններ և այլն։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բացոթեգային կրակներն ու ծուխը հեշտությամբ յերևան են հանում զորքերի ներկայությունը. արորած շավիղները քողարկման անելու նշանակություն ունեն։

Հանգստի տեղավորվելու համար հրաման է արձակվում, որի մեջ մատնանշվում է.

1. Տեղեկություններ հակառակորդի մասին։
2. Տեղեկություններ իրենց հարևան զորքերի մասին։
3. Ամբողջ զորական միավորության (այունի) տեղավորության շրջանը։
4. Շտաբի տեղավորության վայրը։
5. Այունի կազմի մեջ մտնող մասերի տեղավորության շրջանները (տեղերը)։
6 Հետախուզության վերակարգը։
7. Անշարժ պահպանության ճակատը. զորքերի վերակարգը անշարժ պահպանության համար. անշարժ պահպանության դասավորությունը վերջացնելու ժամանակը։
8. Որսալահ մասի վերակարգը և նրա դասավորության տեղը։
9. Կապը։
10. Մասի որսալահի վերակարգը։
11. Ողային դիտողության միջոցները։

12. Հակագազային կռվի միջոցները։
13. Հավաքատեղերը (այն մասերում, որոնք առանձին բնակավայրերում և բացոթյա գում են տեղավորված)։
14. Տեղավորման շրջանում գտնվող և մասի ազատ տեղափոխությանը խանգարող արգելքների վերացման աշխատանքները։
15. Մարտի դեպքում դիրքեր պատրաստելու աշխատանքները։
16. Ամբիշական պահպանության միջոցները։
17. Տեղակալները։

Մնացած պետերն իրենց մատնավոր կարգադրություններն են անում վերոհիշյալի համեմատ, իրենց մասերի և իրենց հատկացրած շրջանների սահմաններում։

ԲԱՌԱՅՈՒՅԱԿ

Ազդանշան Сигнал
Անշարժ պահպանություն Сторожевое охранение
Ապրանքատար ավտոմոբիլ Грузовик
Ապահովության միջոցներ Меры обеспечения
Ավագ պետ Старший начальник
Առաջապահ Авангард
Առաջավոր ջոկատ Головной отряд
Բաժնյակ Дивизион
Բացոթյագ Бивак
Բնագիծ Рубеж
Բնակարան-բացոթյագ Квартиро-бивак
Բնակարանորդ Квартирьер
Գազային գույք Газовое имущество
Գազային հրահանգիչ Газовой инструктор
Գազային ռումբ Газовая бомба
Գիշերոթ Ночлег
Գլխավոր ուժեր Главные силы
Գործակից Коэффициент
Գործողություն Операция

Գումակ Обоз
Գումարտակ Батальон
Գրատ Вьюк
Դադարք Привал
Դեպք Дозор
Զրահապատ բաժնյակ Броневой дивизион
» մաս Бронечасть
» մեքենա Бронемашина
Զորական միավորություն Войсковое соединение
Զորքերի խմբավորում Группировка войск
Ընթացուղի Маршрут
Թևային յերթ Фланговый марш
Թռուցիկ պոստ Летучая почта
Ժամկետային զեկուցագիր Срочное донесение
Խար Фураж
Խմբակ Группа
Խումբ Команда
Կազմել Формировать
Կապ Связь
Հակագազային դիմակ Противогазовая маска
Հանգիստ Отдых
Հարձակողական յերթ Наступательный марш
Հակագազային կռիվ Противогазовая борьба
Հաստոցավոր զնդացիր Станковый пулемет
Հավաքական շարքեր Сборные строи

ԲԱՌԱՐԱՆ

Ազդանշան Сигнал
Անշարժ պահպանություն Сторожевое охранение
Ապրանքատար ավտոմոբիլ Грузовик
Ապահովության միջոցներ Меры обеспечения
Ավագ պետ Старший начальник
Առաջապահ Авангард
Առաջավոր ջոկատ Головной отряд
Բաժնյակ Дивизион
Բացոթյակ Бивак
Բնագիծ Рубеж
Բնակարան-բացոթյակ Квартиро-бивак
Բնակարանորդ Квартирьер
Գազային գույք Газовое имущество
Գազային հրահանգիչ Газовой инструктор
Գազային ռումբ Газовая бомба
Գիշերոթ Ночлег
Գլխավոր ուժեր Главные силы
Գործակից Коэффициент
Գործողություն Операция

Գումակ Обоз
Գումարտակ Баталион
Գրատ Вьюк
Դադարք Привал
Դեպք Дозор
Զրահապատ բաժնյակ Броневой дивизион
» մաս Бронечасть
» մեքենա Бронематина
Զորական միավորություն Войсковое соединение
Զորքերի խմբավորում Группировка войск
Ընթացուղի Маршрут
Թևային յերթ Фланговый марш
Թռուցիկ պոստ Летучая почта
Ժամկետային զեկուցագիր Срочное донесение
Խար Фураж
Խմբակ Группа
Խումբ Команда
Կազմել Формировать
Կապ Связь
Հակագազային դիմակ Противогазовая маска
Հանգիստ Отдых
Հարձակողական յերթ Наступательный марш
Հակագազային կռիվ Противогазовая борьба
Հաստոցավոր գնդացիր Станковый пулемет
Հավաքական շարքեր Сборные строи

Հավաքատեղ Сборный пункт
Հեծանվորդ Самокатчик
Հեծելազոր Конница
Հեծելավաշտ Эскадрон
Հեծյալ գունդ Кавалерийский полк
Հեռաձիգ կրակ Дальний огонь
Հետախուզություն Разведывание, разведка
Հեռակայություն Дистанция
Հոբից Гаубица
Հրաման Приказ
Հրապաշար Огнеприпасы
Հրետանի Артиллерия
Հրետանային պարկ Артиллерийский парк
Հրանոթ Орудие
Ձիավոր սուրհանդակ Конный ординарец
Ճանապարհների հանգույց Узел дорог
Ճանապարհի վոլոր Изгиб дороги
Մասնատում Расчленение
Մարտկոց Батарея
Մատույց Подступ
Յելակետ Исходный пункт
Յերթական շարժում Походное движение
Նահանջողական յերթ Отступательный марш
Ներքին կարգ Внутренний порядок
Շարան Эшелон
Շարժանվորդ Мотоциклетист

Շարժման ուղղություն Направление движения
» կարգ Порядок движения
» գաղտնապահություն Скрытность движения
Շավիղ Тропинка
Շտաբ Штаб
Ոգային հետախուզություն Авиоразведка
Որապահ Дежурный
Որավորակ Дневальный
Որապահ մաս Дежурная часть
Ողը դիտելը Наблюдение за воздухом
Որվա գնացք Суточный переход
Ուղեկալ Застава
Ուղեցույց Указатель
Ուղղապահ Линейный
Պահակ Караул
Պատվեր Приказание
Պարկ (կրանք) Парк
Պատվիրակ Делегат
Պոստ Пост
Պուրակ Роща
Չրաման Баклага
Ռադիոկայան Радиостанция
Ռահվիրա Сапер
Ռահվիրական վաշտ Саперная рота
Սավառնակ Самолет

Սյուն Колонна
Սյունի թեքում Сворота колонны
Ստորադաս պետ Подчиненный начальник
Վայրի շերտ Полоса местности
Վաշտ Рота
Վերակարգ Наряд
Վերջապահ Арьергард
Վոտը թափել Идти в ногу
Տագնապ Тревога
Տանկ Танк
Տանկերի բաժնյակ Танковый дивизион
Տեղակալ Заместитель
Տեղանքի բնույթ Характер местности
Տուտ Хвост
Փարոս Маяк
Փթավոտնաչափ Пудофут
Փռվածք Подстилка
Փոխադարձ ոգնություն Взаимная поддержка
Քիմիական վաշտ Химическая рота
Քողարկհան անել Демаскировать
Քողարկ Маска
Քողարկում Маскировка

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм ССР

12. Բ.-Գ. Կ. Բ. Հետևակի ժամանակավոր մարտական կանոնագիրք. մասն I. Թարգ. Ար. Ոհանյան . . . . . 75 կ.

13. Ս. Խ. Հ. Մ. Ռ.-Հ. Խ. 1924 թ. № 1397 հրաման. Հետևակի ժամ. մարտ, կանոն. I մասի. հավ. և փոփոխ. Թարգ. Ար. Ոհանյան. . . . . 15 կ.

14. Բ.-Գ. Կ. Բ. Ժամանակավոր հրաձգային կանոնագիրք. Կոլտի սիստեմի հաստոցավոր գնդացիրը. Թարգ. Թ. Առաքելյան . . . . . 60 կ.

15. Ցե. Սմիսլովսկի.—Հրետանի, Թարգ. Գ. Տ.-Աստվածատրյան . . . . . 60 կ.

16. Ռ. ԴեյբՑեր.—Հրացանաձգի նախապատրաստությունը Թարգ. Գ. Կուրանյան . . . . . 60 կ.

17. Ա. ԼիգՑաու.—Յերթ և հանգիստ . . . Թարգ. Գր. Տեր. Աստվածատրյան . 25 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

1. Մ. Աբեղյան.—Ռուս-հայ ռազմական բառարան.
2. Ռազմաքիմիական գործ.
3. Հրետազորի ժամ. մարտական կանոնագիրք —հրաձգության կանոններ 76 մմ. (3. մատ.) թնդանոթներով զինված թեթև և հեծյալ հրետանու մարտկոցների համար։

ՀՀ Ազգային գրադարան
NL0213650

42.375

ԳԻՆՆ Է 25 ԿՊԿ.

1
2

276